

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

« 30 » 08 2018թ.

No 06/3.1/50957-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍԶՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ.ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ.ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 05.05.2018թ.
թիվ Պ-26 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարկի հաշվարկը կատարվում է առանձնացված հաշվառման եղանակով, եթե հարկ վճարողը միաժամանակ իրականացնում է գործունեության մեկից ավելի տեսակներ, և եթե այդ գործունեության տեսակներից որևէ մեկի մասով հարկերը, օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, պետք է հաշվարկվեն այդ բաժնով սահմանված՝ հարկման որևէ հատուկ համակարգի համար սահմանված կարգով, իսկ գործունեության տեսակներից որևէ մեկի մասով հարկերը, օրենսգրքի համաձայն, պետք է հաշվարկվեն օրենսգրքով սահմանված՝ հարկման ընդհանուր համակարգի համար սահմանված կարգով, ապա հարկ վճարողը պարտավոր է վարել հարկման հատուկ համակարգի շրջանակներում ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, հարկի գումարների, օրենսգրքով սահմանված նվազեցումների, հաշվանցվող (պակասեցվող)

գումարների և հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, հարկի գումարների, օրենսգրքով սահմանված նվազեցումների, հաշվանցվող (պակասեցվող) գումարների առանձնացված հաշվառում,

- 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-րդ մասի 1-8-րդ կետերով սահմանված առանձնացված հաշվառում վարելը հնարավոր չէ, ապա նույն հոդվածի 2-րդ մասի 1-8-րդ կետերով սահմանված դեպքերում հարկման օբյեկտները, հարկման բազաները, հարկի գումարները, օրենսգրքով սահմանված նվազեցումներն ու հաշվանցվող (պակասեցվող) գումարները (այն մասով, որ մասով առանձնացվող հաշվառում վարելը հնարավոր չէ) հաշվարկվում են տեսակարար կշիռների մեթոդով՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքում հիմք ընդունելով հարկման ենթակա գործունեության տեսակներին կամ գործարքներին վերագրվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, օրենսգրքով սահմանված նվազեցումների կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների տեսակարար կշիռները հարկ վճարողի, համապատասխանաբար, ընդհանուր հարկման օբյեկտների, ընդհանուր հարկման բազաների, օրենսգրքով սահմանված ընդհանուր նվազեցումների կամ ընդհանուր հաշվանցվող (պակասեցվող) գումարների կառուցվածքում,

- 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի կիրառության իմաստով համարվում է, որ առանձնացված հաշվառում վարելը հնարավոր չէ, եթե հարկման օբյեկտները կամ հարկման բազաները կամ հարկի գումարները կամ եկամուտները կամ դրանց ստացման հետ կապված՝ օրենսգրքով սահմանված նվազեցումները կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարները հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել հարկման ենթակա, հարկման ոչ ենթակա, հարկման տարբեր համակարգերում հարկման ենթակա, տարբերակված դրույքաչափով հարկման ենթակա կոնկրետ գործարքին կամ գործունեության կոնկրետ տեսակին կամ եկամտի կոնկրետ տեսակին,

- 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ առանձնացված հաշվառման եղանակի և նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ տեսակարար կշիռների մեթոդի կիրառության կանոնների առանձնահատկությունները սահմանված են օրենսգրքի հատուկ մասի՝ առանձին հարկատեսակներին վերաբերող բաժիններում,

- 56-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում իրականացվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման

գործարքի գծով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը, օրենսգրքի 4-րդ բաժնի համաձայն, կրում են գործարքի կողմ համարվող՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը կամ մշտական հաստատությունը, ապա այդ գործարքի մասով հարկային հաշիվը, իսկ օրենսգրքով սահմանված դեպքերում նաև՝ ճշգրտող հարկային հաշիվը դուրս է գրվում ՀՀ ռեզիդենտ կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի կամ մշտական հաստատության կողմից,

- 70-րդ հոդվածի 2-րդ մասի (01.07.2018թ.-ից գործող խմբագրությամբ) համաձայն՝ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում իրականացված՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների գծով օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության փոխարեն՝ որպես հարկային գործակալ, կրում են պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարողները,

- 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության 5-րդ կետի (01.07.2018թ.-ից գործող խմբագրությամբ) համաձայն՝ նույն մասով սահմանված դեպքերում՝ օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, եթե պայմանագրային հարաբերությունների կողմը համարվում է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ կամ շրջանառության հարկ վճարող կամ արտոնագրային հարկ վճարող՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով,

- 72-րդ հոդվածով սահմանված են ԱԱՀ-ի մասով հաշվանցումների (պակասեցումների) կատարման սահմանափակումները: Մասնավորապես, նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ օրենսգրքի 70-րդ և 74-րդ հոդվածներով սահմանված կարգով բյուջե վճարման ենթակա կամ բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվարկման նպատակով ԱԱՀ-ի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարում, եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները վերագրվում են օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հարկման հատուկ հավակարգերի շրջանակներում հարկման ենթակա գործարքներին,

- 73-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ձեռքբերումներն ուղղակիորեն վերագրվում են ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին, ապա այդ ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարները հաշվանցման (պակասեցման) ենթակա չեն ձեռքբերումների կատարման հաշվետու ժամանակաշրջանում:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ.

1) ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների գծով, որոնք վերաբերում են՝

- ԱԱՀ վճարող ռեզիդենտ կազմակերպության կողմից իրականացվող՝ ԱԱՀ-ով հարկվող գործունեությանը, օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը այդ ոչ ռեզիդենտ կազմակերպության փոխարեն՝ որպես հարկային գործակալ, կրում է պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող ԱԱՀ վճարող ռեզիդենտ կազմակերպությունը,

- ԱԱՀ վճարող ռեզիդենտ կազմակերպության կողմից իրականացվող՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեությանը, օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը,


2) ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում իրականացվող՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքի մասով ԱԱՀ վճարող ռեզիդենտ կազմակերպությունը օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան հարկային հաշիվ դուրս է գրում միայն այն գործարքների մասով, որոնք վերաբերում են ԱԱՀ-ով հարկվող գործունեությանը, որի համար ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը կրում է ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորություն (ԱԱՀ-ով հարկվող գործունեությանը վերաբերող չափով),

3) ԱԱՀ վճարողի կողմից միաժամանակ ԱԱՀ-ով հարկվող և արտոնագրային հարկով հարկման ենթակա գործունեություն իրականացվելու դեպքում ԱԱՀ-ով հարկվող գործարքներին վերագրվող հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարները, ինչպես նաև արտոնագրային հարկով հարկման ենթակա գործունեությանը վերագրվող հաշվանցման (պակասեցման) ոչ ենթակա ԱԱՀ-ի գումարները որոշվում են ՀՀ հարկային օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված կարգավորումներին համապատասխան,

4) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում միաժամանակ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ և արտոնագրային հարկով հարկման ենթակա գործունեություն իրականացնելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերումների մասով արտոնագրային հարկով հարկման ենթակա գործունեությանը վերագրվող հաշվանցման (պակասեցման) ոչ ենթակա ԱԱՀ-ի գումարները ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում լրացվում են՝ նշելով ՀՀ հարկային օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված համապատասխան հիմքը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 8/30/2018 21:26:18 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՄՍԸՎ հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության թիվ 1 բաժին,
հեռ. (060)544780

